# Նախագահական Հրամանագիր

Թիւ 13 - 2014-02-25

## ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՕԶԱՆԵԱՆ 150 ԱՄԵԱԿ-Ի ՎԵՐԱԲԵՐԵԱԼ
## (25.02.1865 – 31.10.1927)

**Կարին, 25 Փետրուար 2014թ.**

**Յոդված 1.** - Արևմտեան Հայաստանի Հանրապետության նախագահ Արմենակ ԱԲՐԱՀԱՄԵԱՆը, պատիվ ունի հայտարերելու, որ 2014 թվականի փետրվարի 25-ին նշվում է (մինչեւ 2015), հայ ազատագրական շարժման ազգային հերոս, Զորավար Անդրանիկի ծննդեան 150 ամեակը :

**Յոդված 2.** - Այդ նպատակով ողջ հայկական աշխարհում, կկազմակերպվեն մի շարք գիտաժողովներ և տարբեր միջոցառումներ նրա հիշատակը հարգելու համար:

Արմենակ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
**Արևմտեան Հայաստանի Հանրապետութեան Նախակահ՛**

ՀՐԱՄԱՆԱԳԻՐ

# ԶՕՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՕԶԱՆԵԱՆ-ԻՆ 150 ԱՄԵԱԿ-Ի ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

## (25.02.1865 – 31.10.1927)

« Ես ոչ Սուլթանի, ոչ Թալյաթի  Ենվերների հետ կրնամ ընկերանալ, ես ոչ կրնամ նրանց ձեռքե սղմել, բարով վայելեք, դուք գնացեք վայլեք նրանց հետ
Ես թուրքին լավ կը ճանչնամ, զգուշացեք ձեր նորագույն ընկերներից, նրանք ձեր գլուխն էլ պիտի ուտեն, ձեր ժողովրդին էլ: »



# ԱՆԴՐԱՆԻԿԻ ԿՅԱՆՔԻ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

*1865, փետրվարի 25 - Արեւմտյան Հայաստանի Շապին Գարահիսար գավառական քաղաքում, հայ արհեստավորի ընտանիքում ծնվեց Անդրանիկ Թորոսի Օզանյանը:*

*1875 - 1882 - ուսումնառությունը Շապին Գարահիսարի Մուշեղյան վարժարանում:*

*1884 - 1886 - Անդրանիկը մեկնում է Կոստանդնուպոլիս, աշխատում որպես հյուսն: Կապեր է հաստատում հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ-ների հետ:*

*1889 - անդամակցում է Հնչակյան կուսակցությանը:*

*1892 - հարում է Հ. Յ. Դաշնակցությանը:*

*1892 - ահաբեկում է Կոստանդնուպոլսի ոստիկանապետին, որը հայտնի էր հայ ազգային-ազատագրական շարժման գործիչների հանդեպ իր դաժան հաշվեհարդարներով:*

*1893 - Տարոնում, Արաբոյի ֆիդայական խմբի կազմում մասնակցում է թուրքական զորքերի դեմ մարտական գործողություններին: Սակայն օտարերկյա հյուպատոսների ճնշմամբ ֆիդայիները թողնում են Սասունն ու Տարոնը:*

*1895 - 26 հայդուկ-կամավորականների հետ Կարաուրղանով անցնում է Տարոն եւ Սասուն: Մինչեւ 1896 թ. գարունը մասնակցում է ֆիդայիների մարտական գործողություններին՝ ընդդեմ թուրքական զորքերի:*

*1896, մարտ - Սարիղամիշի մոտ անցնում է ռուսական սահմանը, հասնում է Կարս, որտեղից էլ ուղեւորվում է Ալեքսանդրապոլ:*

*1896 – 1897 - վարձու աշխատանք Սեւաստոպոլում եւ Յալթայում:*

*1897, մայիս - թողնում է Ղրիմը: Հայդուկների խմբի հետ ուղղվում է դեպի Կովկաս եւ Պարսկաստան:*

*1897, հուլիսի 11 - հայդուկների խմբի հետ պարսկական սահմանամերձ Սարայ գյուղի մոտ հատում է Արեւմտյան Հայաստանի սահմանը:*

*1897, հուլիսի 27 - նշանակվում է հայդուկների տասնապետ:*

*1897, օգոստոսի 31 - թաքնվում է Կտուց անապատում՝ Վանա լճի կղզում:*

*1897, սեպտեմբեր - Աղբյուր Սերոբի ջոկատի կազմում վերսկսում է զինված պայքարը թուրքական բռնակալության դեմ (Սասուն եւ Տարոն):*

*1899 - ֆիդայական ջոկատի հրամանատար: Անդրանիկը դառնում է Տարոնում եւ Սասունում գործող հայդուկային խմբերի ղեկավարներից մեկը:*

*1900 - սպանում է հայկական ջարդերի ակտիվ մասնակից Բշարե Խալիլին:*

*1900, դեկտեմբեր - Սասունում հրավիրում է հայդուկային ջոկատների հրամանատարների եւ տեղական հայ բնակչության ներկայացուցիչների խորհրդակ-ցություն, որում քննարկվում է բնակչության զինման եւ թուրքական բռնա-պետության դեմ պայքարի մեջ նրա ներգրավման հարցը:*

*1901, հուլիս-հոկտեմբեր - օգնում է սասունցիներին զինված պաշտպանություն նախապատրաստել:*

*1901, նոյեմբերի 4 - 28 հայդուկների հետ ամրանում է Առաքելոց վանքում (Մշո դաշտ) եւ պաշտպանվում 25 օր:*

*1901, նոյեմբերի 27 - մեծաթիվ թուրքական զորքերի դեմ մղված հերոսական մարտերից*

հետո Անդրանիկն իր ջոկատն անվնաս դուրս է բերում վան-քից, ճեղքում է պաշարումն ու անցնում Սասնա լեռները:
1902 - հայդուկային ջոկատների հետ մարտական գործողություններ է իրակա-նացնում Տարոնում եւ Սասունում:
1903 - աշնանը Անդրանիկն անցնում է Շատախ, որտեղից Սասուն է փոխադրում զենք ու պարենամթերք:
1904, հունվար-օգոստոս - որպես հայդուկային ջոկատների ղեկավար՝ Սասունի եւ Մուշի հայկական գյուղերի շրջակայքում մասնակցում է թուրքական զորքերի դեմ մղվող մարտերին:
1904, օգոստոսի 3 - Անդրանիկի ջոկատը նավերով Տարոնից անցնում է Աղթամար կղզի:
1904, օգոստոսի 5-7 - հայդուկները Անդրանիկի գլխավորությամբ ետ են մղում Աղթամար կղզին շրջապատած թուրքական ռազմանավերը:
1904, օգոստոսի 7 - Անդրանիկի ջոկատը գիշերվա շղարշի ներքո նավով անցնում է Կտուց կղզի:
1904, օգոստոսի 21 - Անդրանիկն ու իր զինակիցները Վարագա վանքում են:
1904, սեպտեմբեր - հայդուկների խմբով անցնում է Պարսկաստան:
1904, նոյեմբեր-դեկտեմբեր - մեկնում է Բաքու եւ Թիֆլիս: Թիֆլիսում հյուր-ընկալվում է բանաստեղծ Հովհաննես Թումանյանի տանը:
1905, հունվար-մարտ - ուղեւորվում է Փարիզ, այնտեղից էլ ապրիլին՝ Ժնեւ: Գրում է "Մարտական հրահանգներ", որ լույս է տեսնում Ժնեւում, 1906 թ.:
1906 - Անդրանիկն ուժերի միավորման կոչով դիմում է հեղափոխական մար-տիկներին:
1906 թ. վերջից ապրում է Բուլղարիայում:
1907, փետրվարի 22 - Վիեննայում մասնակցում է Դաշնակցության համաժողովի աշխատանքներին, հանդես է գալիս կուսակցության գծի դեմ եւ հայ-տարարում կուսակցությունից իր հեռանալու մասին:
1907, նոյեմբեր - մեկնում է Սոֆիա, ապա՝ Վառնա:
1908, դեկտեմբեր - ժամանում է Շվեյցարիա:
1909, փետրվար - անլեգալ կերպով ուղեւորվում է Կոստանդնուպոլիս, որտեղ հանդիպում է Դաշնակցության մի քանի ղեկավարների հետ:
1909, նոյեմբեր - Վառնայից մեկնում է Փարիզ՝ զենք եւ զինամթերք ձեռք բերելու համար:
1910 - Վառնայում Անդրանիկը սարքավորում է փամփուշտների լցոնման արհես-տանոց:
1910, սեպտեմբեր - երկրորդ ուղեւորությունը Մանչեստր՝ զենք գնելու նպատակով:
1910, նոյեմբեր - 1912, նոյեմբեր - ապրում է Բուլղարիայում:
1912, նոյեմբեր - մեկնում է Սոֆիա եւ ընդունում Հայկական Կամավորական վաշտի հրամանատարությունը:
- Անդրանիկի գլխավորած Հայկական Կամավորական վաշտը Բուլղա-րական բանակի կազմում մասնակցում է Բալկանյան Առաջին պատե-րազմին՝ ընդդեմ Թուրքիայի:
1912, նոյեմբերի 4-15 - Անդրանիկի վաշտն ակտիվ մասնակցություն է ունենում Մեստանլիի, Ուզուն-Համիդլարի, Բալքան-Թորեսի, Մերհամլիի (որտեղ նոյեմբերի 15-ին գերի է վերցվում Յավեր փաշան) մոտ մղված մարտերին:
1912, նոյեմբերի 23 - հայ կամավորները մտնում են Ռոդոսթո քաղաքը:
1912, նոյեմբերի 22 - Անդրանիկի վաշտը մասնակցում է Մերեֆտե քաղաքի համար մղված մարտերին:
1912, դեկտեմբերի 16 - 1913, հունվարի 20 - Մարմարա ծովի ափերի պաշտպա-նություն:
1913, հունվարի 23 - Հայկական Կամավորական վաշտը մասնակցում է Շար-Քեոյի համար մղված մարտերին:
1913, մայիսի 25 - Թուրքիայի հետ խաղաղության դաշն կնքելու հետեւանքով վաշտը կազմալուծվում է: Մինչեւ 1914 թ. օգոստոսն Անդրանիկն ապրում է Բուլղարիայում:
1914, օգոստոսի 2 - Առաջին Համաշխարհային պատերազմը սկսվելուն պես Անդրանիկը Վառնայից մեկնում է Օդեսա, որտեղից էլ՝ Յալթայով, Տուապսեով, Փոթիով անցնում է Թիֆլիս:
1914, օգոստոսի 12 - հանդիպում Կովկասյան ռազմական շրջանի զորքերի գլխավոր հրամանատար Միշլաեւսկու հետ:
1914, նոյեմբեր - Անդրանիկին հանձնարարված է կազմավորել Առաջին Հայկական

2

կամավորական գունդը և ընդունել դրա հրամանատարությունը:
1914, հոկտեմբերի 16 - Անդրանիկը Թիֆլիսից մեկնում է ռազմաճակատ:
1914, օգոստոսի 25 - Անդրանիկը հասնում է Խոյ (Սալմաստ) և ընդունում Առաջին Հայկական Կամավորական գնդի հրամանատարությունը:
1914, նոյեմբերի 3 - Դիլմանում հանդիպում է ռուսական զորքերի ադրբեջանական ջոկատի հրամանատար գեներալ-լեյտենանտ Չերնոզուբովի հետ:
1914, նոյեմբերի 4-5 - Անդրանիկի և իր կամավորական գնդի մասնակցությունը Աշնակ գյուղի մոտ մղված մարտերին:
1914, նոյեմբերի 7-16 - Անդրանիկի գունդը հաղթական մարտեր է մղում Վրաշ-Խորանի և Կաշկույի լեռնանցքների շրջանում:
1914, նոյեմբերի 19-26 - Անդրանիկի կամավորները մասնակցում են Սարայի և Աուրիի մարտերին:
1914, դեկտեմբերի 1-5 - գունդը գրավում է Բեյազուկ քաղաքը:
1914, դեկտեմբերի 1 - Կովկասյան ճակատում սկսվում է ռուսական զորքերի ընդհանուր նահանջը: Անդրանիկն ու իր գունդը ետ են քաշվում Սարայ (Ղոթուր):
1914, դեկտեմբերի 3 - կամավորները նահանջում են Ռազի գյուղի ուղղությամբ:
1914, դեկտեմբերի 5 - Բրդական Բեյազուկ գյուղի մոտ գունդը մարտի է բռնվում թշնամու հետ և հետ է մղում նրա հարձակումները:
1914, դեկտեմբերի 31 - գունդը նահանջում է Ջուլֆա՝ դեպի ռուսական սահման: Մարտերում ցուցաբերած արիության համար Անդրանիկը պարգևատրվում է Գեորգիևյան խաչով և սրով:
1915, հունվարի 11 - Անդրանիկի Առաջին Կամավորական գունդը Ջուլֆայից մեկնում է Թավրիզի ուղղությամբ:
1915, հունվարի 12 - գունդը մտնում է Մարանդ քաղաք:
1915, հունվարի 14-փետրվարի 10 - գունդը զորաշարժեր է կատարում Մարանդ - Սոֆյան-Խոյ քաղաքների միջև ընկած տարածքում:
1915, փետրվարի 10 - Անդրանիկը մեկնում է Թիֆլիս՝ բուժվելու:
1915, փետրվարի 23 - Անդրանիկը վերադառնում է ճակատ: Մարտին գունդը կրկին կենտրոնանում է Խոյում, որտեղ զինաշարժեր է կատարում մինչև ապրիլի 15-ը:
1915, ապրիլի 15-18 - Առաջին Հայկական Կամավորական գունդը խիզախություն և ինքնազոհաբերություն է ցուցաբերում Դիլմանի ճակատամարտում, որտեղ ջախջախվում են Խալիլ բեյի կորպուսի հիմնական ուժերը:
1915, ապրիլի 20-մայիսի 4 - գունդը հետապնդում է Խալիլ բեյի ջախջախված կորպուսի մնացորդներին:
1915, մայիսի 5 - Անդրանիկի գունդը ռուսական զորքերի Վանի ջոկատի կազմում մասնակցում է Բաշկալե քաղաքի համար մղված մարտերին:
1915, մայիսի 15-18 - Բոշխաա-Դաղի լեռնանցքի շրջանում Անդրանիկի գունդը միայնակ հարձակվում է գրոհում թշնամու վրա և նրան փախուստի մատնում:
1915, մայիսի 31 - Անդրանիկի գունդը կռվելով հասնում է Հայոց ձոր (Վանի վիլայեթ), ազատում է մի քանի գյուղեր, շարժվում Վանի ուղղությամբ:
1915, հունիսի 3 - Անդրանիկը կամավորների հետ մտնում է Վան:
1915, հունիսի 12 - գունդը մտնում է Ոստան:
1915, հունիսի 16-17 - Անդրանիկի գունդը Զևինի մոտ մղված մարտերում ջախջախիչ հարված է հասցնում և փախուստի է մատնում հակահարձակման անցած թշնամուն: Մարտում ցուցաբերած արիության և գնդի հմուտ ղեկավարման համար Անդրանիկը պարգևատրվում է Գեորգիևյան 2-րդ աստիճանի խաչով:
1915, հունիսի 29 - գունդը մասնակցում է Վանա լճում մղվող մարտերին:
1915, հուլիսի 7-17 - հուլիսի 7-ին՝ մարտ Ալբաք գյուղի մոտ: Գունդը, արյունահեղ մարտեր մղելով, շարժվում է Գավաշի և Տարոնի ուղղությամբ: Գրավվում են Գավաշի նավահանգիստը և Մշո դաշտի որոշ գյուղեր:
1915, հուլիսի 11 - սկսվում է ռուսական զորքերի նոր ընդհանուր նահանջը: Անդրանիկը նահանջում է Այխար նավահանգիստ (Բերկրի-Կալե):
1915, հուլիսի 17 - Գավաշի մոտ մղված մարտերում ակտիվ մասնակցության համար Անդրանիկը պարգևատրվում է Գեորգիևյան 1-ին աստիճանի խաչով:
1915, հուլիսի 17 - գունդը հասնում է Բերկրի-Կալե, մասնակցում է մարտերին՝

պաշտպանելով դեպի ռուսական սահմանը շարժվող հայ փախստականների քարավանները:
1915, հուլիսի 26 - Առաջին Հայկական Կամավորական գնդի մնացորդները կենտրոնանում են Իգդիրում:
1915, օգոստոսի 8 - Անդրանիկը Երևանում է:
1915, օգոստոսի 12 - Անդրանիկը մեկնում է Թիֆլիս: Օգոստոսի 25-ին պար-գևատրվում է Սբ Ստանիսլավի 2-րդ աստիճանի շքանշանով:
1915, սեպտեմբեր-հոկտեմբեր - Անդրանիկը զբաղվում է գնդի հանդերձանքի, սպառազինման համալրմամբ և ռազմական ուսուցմամբ:
1915, հոկտեմբերի 14 - համալրված Առաջին Հայկական Կամավորական գունդը Սմբատի ղեկավարությամբ ժամանում է Վան:
1915, նոյեմբերի 2 - Անդրանիկը մեկնում է ճակատ և ընդունում գնդի հրամանատարությունը: Գունդը թշնամական ուժերի դեմ շարունակական մարտեր է մղում Վանա լճի հյուսիս-արևմտյան և արևմտյան ափերին:
1915, դեկտեմբերի 23 - Անդրանիկը Վանում է:
1916, հունվարի 10 - Անդրանիկը ժամանում է Արճեշ:
1916, հունվարի 20-փետրվարի 13 - մարտ Նորաշեն գյուղի մոտ: Գունդը տիրում է Այցավագին:
1916, փետրվարի 2 - գունդը գրավում է Ախլաթը:
1916, փետրվարի 7 - գունդը գրավում է Դատվանը:
1916, փետրվարի 15-21 - մարտի 1 - Անդրանիկի գունդը գեներալ Արացիևի ջոկատի կազմում համառ մարտեր է մղում Բիթլիսի ուղղությամբ: Այդ մարտերում ցուցաբերած խիզախության համար Անդրանիկը ներկայացվում է Վլադիմիրի 4-րդ աստիճանի շքանշանի՝ սրով և ժապավենակապով:
1916, մարտի 1 - գունդը մտնում է Բաղեշ (Բիթլիս):
1916, մարտի 8 - հետապնդելով նահանջող թշնամուն՝ Անդրանիկի գունդը մտնում է Մշո դաշտ:
1916, մարտի 13 - Անդրանիկը մտնում է Մուշ:
1916, մարտ 14-18 - գունդը թշնամու ասպատակությունններից պաշտպանում է Մուշ-Բաղեշ ճանապարհը:
1916, մարտի 18 - գեներալ Արացիևի հետ տարաձայնություններ ունենալու պատճառով Անդրանիկը գնդի հրամանատարությունը հանձնում է Սմբատին և մեկնում Թիֆլիս:
1916, մայիս - հայ կամավորական գնդերը կանոնավոր զորքերի վերափոխելու հետ կապված՝ Անդրանիկը հրաժարական է տալիս:
1916, հուլիս-օգոստոս - Անդրանիկը ուղևորվում է Բաքու, այնտեղից՝ Հյուսիսային Կովկաս: Պյատիգորսկի, Արմավիրի, Մայկոպի և այլ բնակավայրերի հայկական գաղութներում օգնություն է կազմակերպում հայ գաղթականների համար:
1916, սեպտեմբեր - Նույն նպատակով մեկնում է Նոր Նախիջևան (Ռոստով):
1917, հունվար - Անդրանիկը կրկին Արմավիրում է:
1917, ապրիլի 14 - Անդրանիկը, գրող Վ. Թոթովենցը, Ա. Բոնապարտյանը և Տեր-Հակոբյանը Թիֆլիսում պայմանագիր են կնքում "Հայաստան" օրաթերթի հրատարակման մասին:
1917, դեկտեմբերի 22 - հրապարակվում է Կովկասյան ճակատի զորքերի գլխավոր հրամանատարի հրամանը՝ Անդրանիկի հրամանատարությամբ Հայկական Առանձին Հրաձգային զորամասի ձևավորման մասին:
1918, հունվարի 23 - Անդրանիկին շնորհվում է գեներալ-մայորի զինվորական կոչում:
1918, հունվարի 16 - Կովկասյան ճակատի զորքերի գլխավոր հրամանատարի հրամանը՝ Հայկական Առանձին Հրաձգային զորամասը Երկրապահ զորամասի վերափոխելու մասին:
1918, փետրվարի 2 - զորամասը ձևավորելու համար Անդրանիկը գալիս է Ալեքսանդրապոլ:
1918, փետրվարի 15 (մարտի 2) - Անդրանիկը ժամանում է Էրզրում և գլխավորում է Էրզրումի ամրացված շրջանի պաշտպանությունը:
1918, փետրվարի 27 - դաժան մարտերից հետո Անդրանիկի Երկրապահ զորամասը

թողնում է էրզրումը:
1918, մարտի 11 - Անդրանիկը վերադառնում է Ալեքսանդրապոլ:
1918, մարտի 12 - Հայկական Երկրապահ զորամասի կազմալուծումը՝ պայմա-նավորված Բրեստ-Լիտովսկի խաղաղության պայմանագրի կնքմամբ:
1918, ապրիլի 10, Ալեքսանդրապոլ - Հայկական Առանձին Հարվածող գնդի (զորամասի) ձևավորումը Անդրանիկի հրամանատարությամբ:
1918, ապրիլի 11 - Հայկական Առանձին Հարվածող զորամասը գրավեցնում է սահմանագլխում իրեն հատկացված դիրքերը:
1918, ապրիլի 15 - թուրքական զորքերը հարձակման են անցնում ճակատի ամբողջ երկարությամբ: Ալեքսանդրապոլի անկումը: Անդրանիկի զորա-մասը մարտական գործողություններ է իրականացնում թշնամու գերա-կշիռ ուժերի դեմ:
1918, ապրիլի 16-17 - համառ պաշտպանական մարտերից հետո Անդրանիկի զորամասը նահանջում է Վորոնցովկայի ուղղությամբ:
1918, մայիսի 4 - զորամասը մարտեր մղելով նահանջում է դեպի Ջալալօղլի: Անդրանիկը վճռական միջոցներ է ձեռք առնում թշնամուն հակահարված տալու համար:
1918, մայիսի 17 - արյունալի մարտերից հետո զորամասը թողնում է Ջալալօղլին:
1918, մայիսի 18 - զորամասը մտնում է Դսեղ գյուղ: Անդրանիկը Հովհաննես Թու-մանյանի հյուրն է:
1918, մայիսի 25 - զորամասը մեկնում է Դսեղից:
1918, մայիսի 28 - Նիկիտինո գյուղի մոտ զորամասը կասեցնում է թուրքական զորքերի առաջխաղացումը դեպի Դիլիջան:
1918, հունիսի 1-3 - Անդրանիկի Հայկական Առանձին Հարվածող զորամասը Դիլիջանում է:1918, հունիսի 5 - զորամասը ժամանում է Եյլենովկա:
1918, հունիսի 9 - զորամասը մեկնում է Նոր Բայազետ:
1918, հունիսի 13-16 - զորամասը Քեշիշքենդում է:
1918, հունիսի 17 - Անդրանիկի կարգադրությամբ Նախիջևանի շրջանում ռմբվում են երկաթուղային կամուրջներ, թունելներ և ապամոնտաժվում են ռելսերը, որպեսզի կասեցվի թուրքական զորքերի առաջխաղացումը:
1918, հունիսի 20 - զորամասը մտնում է Նախիջևան:
1918, հունիսի 21 - զորամասը գրավեցնում է Ջուլֆայի ռուսական և հայկական հատվածները և գերևարում է թուրքական պահակախմբին:
1918, հունիսի 21 - զորամասը շարժվում է Խոյի ուղղությամբ:
1918, հունիսի 22 - Խոյի արվարձանում Անդրանիկը մարտ է բռնվում թուրքական զորքերի առաջապահ խոշոր ջոկատի (600 զինվոր) հետ:
1918, հունիսի 23 - Հայկական զորամասը, պաշտպանելով բազմահազար գաղթա-կանության շարժը, անցնում է Ջուլֆա:
1918, հունիսի 25 - Ջուլֆայում Անդրանիկի զորամասին է միանում փանեցիների կամավորական ջոկատը: Միացյալ ջոկատը շարժվում է Նախիջևանի ուղղությամբ:
1918, հուլիսի 3 - Անդրանիկի զորամասը Նախիջևանում է:
1918, հուլիսի 7 - Նախիջևանի Հայ Ազգային խորհուրդը Անդրանիկին խնդրում է ստանձնել թուրքական վտանգից տեղի հայ բնակչության պաշտ-պանությունը:
1918, հուլիսի 12 - Անդրանիկի զորամասը ժամանում է Ապրակունիս:
1918, հուլիսի 14 - Անդրանիկը հրաման է ստորագրում իր ջոկատի հետ Սովետական Ռուսաստանի ենթակայության տակ անցնելու, Նախիջևանի գավառը Սովետական Ռուսաստանի անբաժան մաս հայտարարելու և ռազմական դրություն մտցնելու վերաբերյալ:
1918, հուլիսի 16-19 - Ջուլֆայում և Նախիջևանում դաժան մարտեր են մղվում այնտեղ ներխուժած թուրքական զորքերի և Անդրանիկի զորամասերի միջև:
1918, հուլիսի 19 - Նախիջևանի անկումը:
1918, հուլիսի 20 - Անդրանիկի զորամասը գաղթականների հետ նահանջում է Նախիջևանից Ապրակունիսի ուղղությամբ:
1918, հուլիսի 27 - Անդրանիկի զորամասը և գաղթականները մտնում են Կապան:
1918, օգոստոսի 3 - զորամասն ու գաղթականները ժամանում են Գորիս:
1918, օգոստոսի 3 - զորամասն ու գաղթականները ժամանում են Սիսիանի շրջանի Անգեղակոթ գյուղ:

1918, սեպտեմբերի 1 - որոշ ջոկատների պետեր իրենց զինվորների հետ լքում են Անդրանիկի հարվածող զորամասը եւ ուղղվում են Դարալագյազ՝ դեպի Հայկական հանրապետության սահմանները: 4 հազար զինվորից Անդրանիկի ենթակայության տակ է մնում 1300-ը:

1918, սեպտեմբերի 3 - Անդրանիկն անցնում է զորամասի վերակազմակերպմանը:

1918, սեպտեմբերի 4 - Անդրանիկի նախաձեռնությամբ հրավիրվում է Սիսիանի շրջանի բնակչության ներկայացուցիչների խորհրդակցություն: Որոշում է ընդունվում զորամասը թողնել շրջանում եւ կազմակերպել պաշտ-պանությունը թուրքական վտանգից:

1918, սեպտեմբերի 17-25 - Սիսիանի շրջանի բնակչությունը Անդրանիկի ղեկավարությամբ պատրաստվում է թուրքական վտանգի դիմագրավ-մանը: Զորամասը կատարում է զորաշարժեր:

1918, սեպտեմբերի 28 - մուսավաթական զինված ուժերի հարձակումը Գորիսի շրջանի վրա: Անդրանիկն իր զորամասով շտապում է օգնության: Ճանապարհին՝ Աղուդի եւ Վաղուդի գյուղերի մերձակայքում, կրկին զինված բախում է տեղի ունենում տեղական բնակչության հետ:

1918, սեպտեմբերի 29 - Անդրանիկի զորամասը մտնում է Գորիս:

1918, հոկտեմբերի 1-10 - Անդրանիկը կազմակերպում է Գորիսի շրջանի պաշտ-պանությունը:

1918, հոկտեմբերի 14 - Անդրանիկի զորամասը Շուշվա եւ Գանձակի գնդերի հետ գրավում է Գորիս-Սիսիան պաշտպանական գիծը:

1918, հոկտեմբերի 16 - զորամասը կրկին կենտրոնանում է Գորիսում:

1918, հոկտեմբերի 19 - ճակատի պաշտպանական գծի երկարությամբ ավարտվում է զորամասի եւ այլ հայկական զորամասերի դիրքերի կառուցումը: Անդրանիկն իրականացնում է ճակատի տեսչական զննում:

1918, հոկտեմբերի 20 - Անդրանիկը Գորիսի շրջանի բնակչությունից ձեւավորում է 2 պահեստային վաշտեր:

1918, հոկտեմբերի 26 - Անդրանիկը Ղարաբաղից նամակներ է ստանում օգնության հասնելու խնդրանքով:

1918, նոյեմբերի 16 - Անդրանիկի ուժերի մի մասը ուղղվում է Խնձորեսկ գյուղ:

1918, նոյեմբերի 18 - Անդրանիկի զինված ուժերը հեռանում են Ղարաբաղի ուղղությամբ: Զորամասն առաջ է շարժվում դեպի Զաբուղի ձոր՝ անդա-դար մարտեր մղելով թուրքական եւ մուսավաթական զորքերի դեմ:

1918, նոյեմբերի 30 - զորամասը գրավում է տեղանքի նկատմամբ տիրապետող Մեքքիզ գյուղը:

1918, դեկտեմբերի 1 - Անդրանիկի զինուժը, դիմագրավելով հակառակորդի հակագրոհները, գրավում է մի շարք այլ գյուղեր:

1918, դեկտեմբերի 2 - Անդրանիկին այցելում են Անդրկովկասում անգլիական բանակային զորքերի հրամանատար Թոմսոնի ներկայացուցիչները եւ նրա անունից հանձնում են զինվորական գործողությունները անմիջապես դադարեցնելու վերջնագիրը:

1918, դեկտեմբերի 3 - Անդրանիկի զորամասը դադարեցնում է զինվորական գործողությունները:

1918, դեկտեմբերի 4 - Անդրանիկի զինված ուժերը վերադառնում են Գորիս:

1918, դեկտեմբերի 22 - Գորիսում Անդրանիկին այցելում է անգլիական մայոր Գիբբոնը՝ բանակցելու ռազմաքաղաքական դրության եւ հայ գաղ-թականության վիճակի վերաբերյալ:

1919, հունվարի 6 - մայոր Գիբբոնի երկրորդ հանդիպումը Անդրանիկի հետ՝ Գորիսում:

1919, հունվարի 10 - հանդիպում անգլիական կապիտան Բուշերի հետ:

1919, հունվարի 25 - հանդիպում Կապանի պղնձահանքերի սեփականատեր Ռոբենի հետ:

1919, փետրվարի 24 - հանդիսավոր պայմաններում Անդրանիկը զորամասի աչքի ընկած զինվորներին եւ սպաներին պարգեւատրում է Գեորգիեւյան խաչերով:

1919, փետրվարի 25 - Անդրանիկին այցելում է անգլիական բանակի կապիտան Թաունսենդը:

1919, փետրվար - Անդրանիկը զորամասի միջոցներից ցորեն է հատկացնում

գաղթականների եւ որբերի համար:

1919, մարտի 5-6 - մայոր Գիբբոնի նոր այցելությունը: Նա Անդրանիկի հետ բանակցում է Հայկական Առանձին Հարվածող զորամասը Զանգեզուրից դուրս բերելու պայմանների մասին:

1919, մարտի 25 - Հայկական Առանձին Հարվածող զորամասը Անդրանիկի հրամանատարությամբ սկսում է տարահանվել Զանգեզուրից:

1919, ապրիլի 2 - զորամասը մեկնում է Անգեղակոթից:

1919, ապրիլի 5 - զորամասը Դարալագյազում է:

1919, ապրիլի 11 - Անդրանիկի զորամասը ժամանում է Դավալու:

1919, ապրիլի 13 - զորամասը ժամանում է Էջմիածին:

1919, ապրիլի 17-23 - Անդրանիկը լուծարում է զորամասը:

1919, ապրիլի 27 - կաթողիկոսին հանձնելով զենքն ու զինամթերքը՝ Անդրանիկը մեկնում է Թիֆլիս: 1919, ապրիլի 28 - Անդրանիկը Թիֆլիսում Հովհաննես Թումանյանի հյուրն է:

1919, ապրիլի 30 - Անդրանիկի զրույցը Վրաստանի մենշեւիկյան կառավարության արտաքին գործերի նախարար Գեգեչկորիի հետ:

1919, մայիսի 7 - Կովկասում Ֆրանսիայի զինվորական միսիայի ղեկավարը Անդրանիկին Եւրոպա մեկնելու վիզա է հատկացնում: Անդրանիկը Թիֆ-լիսից անցնում է Բաթում, այնտեղից էլ նավով՝ Կոստանդնուպոլիս:

1919, հունիս - Կոստանդնուպոլսից Անդրանիկը մեկնում է Մանչեստր (Անգլիա):

1919, նոյեմբեր - Պողոս Նուբարի հրավերով Անդրանիկը ժամանում է Փարիզ:

1919, նոյեմբերի 12 - Անդրանիկը Հայկական ազգային պատվիրակության կազմում ժամանում է Նյու Յորք:

1920, հունվար - Անդրանիկը պատվիրակության հետ այցելում է Բոստոն եւ Չեյսի:

1920, ապրիլ - ժամանում է Ֆրեզնո (Կալիֆորնիա):

1920, մայիս - այցելություն Չիկագո: 1920, հունիս - այցելություն Նյու Յորք:

1920, հուլիսի 29 - վերադառնում է Փարիզ: Հյուրընկալվում է Պողոս Նուբար փաշային: Այցելում է Իզմիր, ապա՝ Եգիպտոս:

1920, նոյեմբեր - այցելություն Ալեքսանդրիա (Եգիպտոս):

1921, մարտ - Մանչեստրում գլխավորում է հայ որբերին եւ գաղթականությանն օգնող Հայ-անգլիական կոմիտեն:

1922, փետրվար - ժամանում է ԱՄՆ՝ հայ գաղթականների եւ որբերի օգտին հան-գանակություն կազմակերպելու համար:

1922, մայիսի 15 - Անդրանիկի ամուսնությունը օրիորդ Նվարդ Քյուրքչյանի հետ՝ Փարիզում:

1922, հունիսի 6 - ԱՄՆ-ի պետդեպարտամենտը Անդրանիկին թույլատրում է մշ-տական բնակություն հաստատել ԱՄՆ-ում:

1922, հուլիսի 1 - Անդրանիկն իր կնոջ հետ Մանչեստրից մեկնում է Լոնդոն:

1922, հուլիսի 5 - վերադարձ ԱՄՆ:

1922, հոկտեմբեր - Անդրանիկը մշտական բնակություն է հաստատում Ֆրեզնո քաղաքում:

1926, հունիս - Անդրանիկը Ֆլորիդայում է:

1927, փետրվար - այցելություն Սան Ֆրանցիսկո:

1927, ապրիլ - այցելություն Բոստոն:

1927, մայիս - ուղեւորվում է Նյու Յորք, Ֆիլադելֆիա:

1927, օգոստոս - Անդրանիկը բուժման կուրս է անցնում Ռիչարդսոն-Սպրինգս առողջավայրում:

1927, օգոստոսի 31 - Անդրանիկը մահանում է Ֆրեզնոյում:

1927, սեպտեմբերի 3 - Անդրանիկի հուղարկավորությունը Ֆրեզնոյի Արարատյան գերեզմանատանը:

1928 - Անդրանիկի աճյունը Ֆրեզնոյից տեղափոխվում է Փարիզի Պեր-Լաշեզ գերեզմանատուն:


ԻԼՅԻՉ ԲԵԳԼԱՐՅԱՆ
ՀԱՅԴՈՒԿՆԵՐ


L'IMAGE
ANDRANIK



ՍՄԲԱՏԻ ՁԻԱՒՈՐ ԽՈՒՄԲԸ
*Конница СМБАТА.*



ՍԵՊՈՒՀԸ ԻՐ ԶԻՆԱԿԻՑ ՕԳՆԱԿԱՆՆԵՐՈՎ.
*СЕПУХЪ и его соратники по оружiю.*



ԵՐԵՒԱՆԻ ՀԱՅՈՒՀԻՆԵՐԸ ՅԱՆՁՆՈՒՄ
ԵՆ ԴՐՕԻ ԽՄԲԻՆ ԴՐՕՇԱԿ
*Эриванскія армянки подносятъ знамя отряду ДРО*



ՆԻԿՈԼԸ ԻՐ ՕԳՆԱԿԱՆՆԵՐՈՎ.
*НИКОЛЪ и его соратники.*



ԱՆԴՐԱՆԻԿՆ ԻՐ ՕԳՆԱԿԱՆՆԵՐՈՎ.
*АНДРАНИКЪ со своими помощниками.*



ԴՐՕԻ ԶԻՆԱԿԻՑ ՕԳՆԱԿԱՆՆԵՐԸ
*Соратники ДРО по оружiю.*





Դ Ր Օ
ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐԻ
*ДРО—начальникъ Армянскаго добровольческаго отряда.*



Խ Ե Չ Օ
ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐԻ ՀԵԾԵԼԱԶՕՐԻ
*ХЕЧО—начальникъ конницы Армянъ-добровольцевъ.*



ԱՒԵՏԻՍԻ ՁԻԱՒՈՐ ԽՈՒՄԲԸ

*Конница АВЕТИСА.*



ԲԵՆՕՆ ԵՒ ԻՐ ՅԻՍՆԵԱԿԸ

*БЕНО со своей полусотней.*



ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՕՐՀՆՈՒՄ
Է ԿԱՄԱՒՈՐՆԵՐԻՆ

*Его Святѣйшество Католикосъ благословляетъ добровольцевъ Армянъ.*



ԶՕՐԱՀԱՆԴԷՍ ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐԻ
ԽՄԲԻ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

*Парадъ отряда добровольцевъ-Армянъ въ Эчміадзинѣ.*



ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐԻ ԳՆԴԻ ԵՐԴՈՒՄԸ

*Присяга отряда армянъ добровольцевъ.*





ԱՆԴՐԱՆԻԿ
ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐԻ

*АНДРАНИКЪ—начальникъ отряда добровольцевъ-армянъ.*



ՃԱՇԿԵՐՈՅԹ ԵՐԵՒԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՈՒՄ ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄՕՏ

*Обѣдъ у Эриванскаго Епархіальнаго Начальника Епископа ХОРЕНА.*



ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՃԱՇԿԵՐՈՅԹ. ՔԱՆԱՔԵՌԻ ԴԱՇՏՈՒՄ

*Общій обѣдъ Армянъ добровольцевъ подъ Канакеромъ*



ՇԵՐԱՄԸ ԻՐ ԶԻՆԱԿԻՑ ՕԳՆԱԿԱՆՆԵՐՈՎ

*ШЕРАМЪ и его соратники по оружiю.*



ՏԷՐ-ԱՒԵՏԻՔԵԱՆԸ ԻՐ ԶԻՆԱԿԻՑ ՕԳՆԱԿԱՆՆԵՐՈՎ

*ТЕРЪ-АВЕТИКЯНЪ и его соратники по оружiю.*



ՀԱՅ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԹ. ՄԱՂԹԱՆՔԸ ԿԱՄԱՒՈՐ ԳՆՏԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀ ԸՆԿՆԵԼԻՍ

*Молебствiе Армянскаго духовенства передъ выступленiемъ въ походъ Армянскихъ добровольческихъ отрядовъ.*



ՌՈՒՍ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՈՒԹ. ՄԱՂԹԱՆՔԸ ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐ ԳՆՏԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀ ԸՆԿՆԵԼԻՍ

*Молебствiе Православнаго духовенства передъ выступленiемъ въ походъ Армянскихъ добровольческихъ отрядовъ.*



ՋԱՆԼԱԹԻ ՀԵԾԵԼԱԶՕՐԸ ՄԵԿՆՈՒՄ Է ԵՐԵՒԱՆԻՑ

*Выступленiе конницы Джанлата изъ Эривани.*



ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐԻ ԳՆԴԻ Ա. ՎԱՇՏԸ

*Первая рота отряда добровольцевъ Армянъ.*



ՔԵՌԻԻ ՀԵԾԵԼԱԶՕՐԸ Ն. Կ. Բ. ՄԵԾ ԻՇԽԱՆ ՄԻԽԱՅԻԼ ՆԻԿՈԼԱԵՒԻՉԻ ԱՐՁԱՆԻ ՄՕՏ ԿԱՐՍՈՒՄ

*Конница КЕРРИ у памятника Е. И. В. Великаго Князя Михаила Николаевича въ Карсѣ.*



ՔԵՌԻՆ ԻՐ ԶԻՆԱԿԻՑ ԸՆԿԵՐՆԵՐՈՎ

*КЕРРИ и его соратники по оружiю*



ՔԵՌԻ
ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐԻ

*КЕРРИ Начальникъ Армянскаго добровольческаго отряда.*



ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐԻ ԳՈՒՆԴԸ ԱՆՑՆՈՒՄ Է
ԶԱՆԳՈՒԻ ԿԱՄՈՒՐՋԻՑ

*Прохожденіе Армянскимъ добровольческимъ отрядомъ черезъ мостъ рѣки Зангу.*



ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐԻ ԽՄԲԻ
ՄԵԿՆՈՒՄԸ ԵՐԵՒԱՆԻՑ

*Выступленіе отряда добровольцевъ-Армянъ изъ Эривани.*



ՀԱՄԱԶԱՍՊԸ ԻՐ ԶԻՆԱԿԻՑ ՕԳՆԱԿԱՆՆԵՐՈՎ

*АМАЗАСПЪ и его соратники.*



ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐԸ ՊԵՏՐՈԳՐԱԴՈՒՄ

*Армяне добровольцы изъ Америки въ Петрограде*



ՕՆԷՆ ԻՐ ՀԱՐԻՒՐԵԱԿՈՎ

*ОНЭ и его сотня.*



Գ. ՆԺԴԵՀԸ ԻՐ ԶԻՆԱԿԻՑ ՕԳՆԱԿԱՆՆԵՐՈՎ

*Г. НЖДЕЙ и его соратники по оружію.*



ՀԱՄԱԶԱՍՊ
ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐՆԵՐԻ

*АМАЗАСПЪ — начальникъ Армянскаго добровольческаго отряда.*



ԶԵՄԼԵԱԿԻ ՁԻԱՒՈՐ ԽՈՒՄԲԸ
Конница ЗЕМЛЯКА



ՂԱԶԱՐԸ ԻՐ ՀԱՐԻՒՐԵԱԿՈՎ.
КАЗАРЪ со своей сотней.



ՍՄԲԱՏՆ ԻՐ ԶԻՆԱԿԻՑ ՕԳՆԱԿԱՆՆԵՐՈՎ.
СМБАТЪ и его соратники.



ՎԱՐԴԱՆ ՔԵՌԻ ՀԱՄԱԶԱՍՊ
ВАРДАНЪ, КЕРРИ, АМАЗАСПЪ.



ՄԱՐՏԻՐՈՍԸ ԻՐ ՀԱՐԻՒՐԵԱԿՈՎ.
МАРТИРОСЪ со своей сотней.



ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԽՄԲԱԿ
Санитарный отрядъ Арманъ добровольцевъ.